Էշ-16331

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«15» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0231-23

Ձեռնարկողը՝ ***«Հենդհայ» ՍՊԸ***
Ք. Գյումրի, Բուլվարային 1 փկղ., տ 27

Գործունեությունը՝ ***Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0231-23

«15» 12 2023թ.

Շիրակի մարզի Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Պատվիրատու՝	«ՀենդՀայ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ամասիա համայնքի, Գտաշեն բնակավայր

Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրը /2-րդ տեղամաս/ գտնվում է Շիրակի մարզում՝ Ամասիա խոշորացված համայնքի Գտաշեն բնակավայրի տարածքում: Ամբողջ հաստատված պաշարներով հանքավայրը զբաղեցնում է շուրջ 23հա մակերես՝ 750մ միջին երկարությամբ և 300մ միջին լայնությամբ: Ամասիայից գտնվում է 12կմ հյուսիս-արևմուտք, Գյումրի քաղաքից 15կմ հյուսիս-արևմուտք, իսկ Բյուրակն գյուղից 2կմ հյուսիս-արևելք: Գյումրի քաղաքի հետ հանքավայրը կապված է ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Մոտակա բնակավայրերն են Ամասիան, Բյուրակնը, Կամխուտը, Գտաշենը, Արեգնադեմը, Կապսը և Վահրամաբերդը:

Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի շահագործման նախագիծը կազմվել է «ՀենդՀայ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված տարածքի հողերը գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր են:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրը գտնվում է Շիրակի լեռնագագաթի ցածրադիր մասում՝ Գյումրու /Շիրակի/ հարթավայրում և բնութագրվում է համեմատաբար հանդարտ ռելիեֆով:

Հանքավայրի բացարձակ բարձրությունները տատանվում են 1760-1835մ սահմաններում:

Գետային ցանցը թույլ է զարգացած, հիմնական ջրային զարկերակը հանդիսանում է Ախուրյան գետը:

Մոտակա ճանապարհը Գյուլիբուլաղ-Ամասիա մայրուղին է, որից հեռավորությունը նվազագույնը կազմում է շուրջ 1կմ:

Համաձայն հաշվետվության՝ հայցվող տարածքում խախտված տարածքներ առկա չեն, նախկինում ընդերքօգտագործման աշխատանքներ չեն իրականացվել:

Շրջանի կլիման տիպիկ լեռնային է՝ առատ տեղումների քանակով, որոնց տարեկան քանակը հասնում է 500-600մմ: Ամենացուրտ ամիսներին ջերմաստիճանը հասնում է -25 -30°C, իսկ ամենատաք ամիսներին ջերմաստիճանը հասնում է +30 - +35°C:

Համաձայն հաշվետվության՝ սողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում են հանքավայրից մոտ 8.9կմ հարավ-հարավ արևելք:

Ըստ երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալների՝ հանքավայրի երկրաբանական կտրվածքը ներկայացված է վերին պլիոցենի բազալտներով, չորրորդական ժամանակաշրջանի կավերով, չորրորդական ժամանակաշրջանի տուֆերով և ժամանակակից առաջացումներով:

Հանքավայրի համար հայցվող տարածքի ներկայիս բնապահպանական իրավիճակը կարելի է գնահատել բարվոք: Մոտակա բնակավայրերում չկան գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, տեղանքո աղտոտված չէ:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Հայցվող տեղամասում բացակայում են նաև պատմամշակութային հուշարձանները:

Հանքավայրի բուն տարածքում ՀՀ Կարմիր գրքе8ում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Գյուլիբուլաxի տուֆերի հանքավայրի (2-րդ տեղամաս) պաշարները հաստատվել են 01.01.1989թ. դրությամբ «Հայերկրաբանություն» ԱՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի /ՊՏՀ/ կողմից 04.07.1989թ. թիվ 302 արձանագրությամբ՝ 837.6հազ.մ^3, A+B+C1 կարգերի, այդ թվում՝ A – 159.4 հազ.մ^3, B – 165.7 հազ.մ^3, C1 – 512.5 հազ.մ^3:

Համաձայն հաշվետվության հանքավայրի պաշարները հաստատվել են 1987թ կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում: Կոպտատաշ քարի նվազագույն թույլատրելի ելքը սահմանվել է 48.3%:

Պաշարները հաստատվել են որպես շինաքար /պատքար/ (РСТ Арм ССР-1102-84 "Камни стоительные из туфов, базальтов, травертинов"), իսկ տուֆի թափոնները (ГОСТ-22263-76 "Щебень и песок из пористых горных пород") դիտարկվել են բետոնում որպես լցանյութ:

«ՀԵՆԴՀԱՅ» ՍՊԸ-ի հայցվող 6.91հա տարածքում հաշվարկվել է 276400մ^3 քանակով արդյունաբերական պաշարներ՝

- մարվող պաշարների քանակն է՝ 280925մ^3, տարեկան արտադրողականությունը՝ 14046,25մ^3 մարվող պաշար,
- կորզվող պաշարները կազմում են 276400մ^3, տարեկան արդյունահանվող պաշարներ՝ 13820մ^3:

Մակաբացման ապարների ծավալը հաշվարկված է 229.3հազ.մ^3, այդ թվում փուշտա– 70.8հազ.մ^3, մակաբացման ապարների միջին հզորությունը – 1.02մ:

Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի /2-րդ տեղամաս/ տարածքը սահմանափակվում է հետևյալ կոորդինատային (ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով՝

1. Y=8392315.5406 X=4530064.5484
2. Y=8392217.6726 X=4530210.0278
3. Y=8392168.0000 X=4530192.0000

4. Y=8392105.6726 X=4530345.0278
5. Y=8392107.3015 X=4530349.8412
6. Y=8392336.5635 X=4530416.8273
7. Y=8392339.6726 X=4530394.0278
8. Y=8392399.6726 X=4530285.0278
9. Y=8392399.6726 X=4530250.0284
10. Y=8392469.6726 X=4530124.0278
11. Y=8392459,6726 X=4530105.0278
12. Y=8392423.6726 X=4530104.0278
13. Y=8392421.5532 X=4530098.2753
14. Y=8392397.8702 X=4530073.2706

Նախագծվող բացահանքի տարածքը զբաղեցնում է 6.91հա մակերես:

Համաձայն նախագծի՝ բացահանքի մշակման ժամկետը 20 տարի է, աշխատանքային ռեժիմը շուրջտարյա 260 օր, միահերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ ETEC 822-ի էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Համաձայն հաշվետվության՝ հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի համատարած մեկ հանքաստիճանով մշակման համակարգը, մակաբացման ապարների հանքավայրի բացված հատակին տեղափոխումով՝ ներքին տեղադրմամբ:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 349մ,
- ամենամեծ լայնությունը – 242մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 4.7մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը –1.2մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 280925մ^3,
- արդյունահանվող պաշարների քանակը– 276.4հազ.մ^3,
- մակաբացման ապարների քանակը – 82.9հազ.մ^3:

Հանքավայրի բացումը կատարվելու է նրա հարավ արևելյան մասի՝ 1806.0մ բարձրության նիշից:

Նախատեսվում է 284.0մ երկարությամբ, 6-7մ լայնությամբ ավտոճանապարհի անցում հանքավայրի հարավ արևմտյան մասից, նրա 1817.0մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1806.0մ բարձրության հորիզոն: Տվյալ 1806.0մ բարձրության հորիզոնում կստեղծվի աշխատանքային հարթ հրապարակ և կմշակվի մեկ հանքաստիճանով: Հետագայում, աշխատանքներն աստիճանաբար դեպի հյուսիս ընթանալով կմշակվի մինչև 1821.6մ բարձրության նիշը՝ ստեղծելով հարթ աշխատանքային հրապարակ:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, համատարած, մեկ կողանի, մշակման համակարգ, որի տարրերն են ՝

հանքաստիճանի բարձրությունը – 3.3-4.7 մ;

աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90^0;

աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ;

աշխատանքների ծավալը 650 մ^3:

Մակաբացման աշխատանքների ծավալները 82900 մ³ ընդհանուր քանակով ներկայացված են 0.3մ միջին հզորությամբ հողաբուսական շերտով՝ 20730 մ³ ծավալով, 0.575 մ հզորությամբ տուֆերի տարաչափ բեկորներով կավավազային կազմի դեյուվիալ բերվածքներով՝ 39720 մ³ և 0.325 մ հզորությամբ ջարդոտված հողմնահարված տուֆերով՝ 22450 մ³:

Շահագործման ընթացքում հանքավայրը մեկ աստիճանով արդյունահանելիս՝ մակաբացման ապարներն աստիճանաբար լցվելու են հանված տուֆերի տեղում, ընդ որում՝ սկզբում ջարդոտված հողմնահարված տուֆերը, որի վրա կավավազային կազմի դեյուվիալ առաջացումները հարթեցվում է, այնուհետև հողաբուսական շերտը, աստիճանաբար ներքին լցակույտ ձևավորելով:

Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել T-170 բուլդոզերի օգնությամբ:

Արտադրական թափոնների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել ETEC 822-ի էքսկավատորի միջոցով՝ հիդրավլիկ մուրճը հակառակ բահի փոխելու միջոցով, շերեփի տարողությունը 1.0մ³ է:

Օգտակար հաստաշերտի արդյունահանման ժամանակ նախագծային կորուստները 2 խմբի են.

1-ին՝ ընդհանուր բացահանքային կորուստներ՝ կազմում են 4525մ³ (1,61%) և 2-րդ՝ օգտակար հանածոն ավտոինքնաթափերով տեղափոխման ժամանակ առաջացող կորուստները, որոնք չնչին են և չեն հաշվառվել:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից՝ ընտրված է ներքին բուլդոզերային լցակույտաառաջացում:

Շահագործման տարիներին տուֆերն արդյունահանելուց և տեղափոխելուց հետո, անմիջապես կատարվում է ներքին լցակույտաառաջացում, այսինքն տուֆերի հանված մասում սկզբում լցվելու են ջարդոտված, հողմնահարված տուֆերը, այնուհետև դեյուվիալ բերվածքները, իսկ նրա վրա հողաբուսական շերտը և հարթեցվում է:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո: 1806-1826.1մ բարձրության վրա փռված 1.2մ միջին բարձրությամբ ներքին լցակույտը հարթեցվելու է բուլդոզերի օգնությամբ:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողատարածքների լեռնատեխնիկական վերականգնում՝ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Հարթեցումը կատարվելու է բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 69100մ², ինչպես նաև արտադրական հրապարակը՝ 250մ²: Ընդհանուր մակերեսը կազմում է 69350մ²:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսվում է 100000 ՀՀ դրամ 1հա մակերեսի համար: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 1 214100 ՀՀ դրամ:

Բացահանքում լեռնային աշխատանքները կատարվելու են «Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրերի մշակման անվտանգության տեխնիկայի միասնական կանոնների» համապատասխան:

Համաձայն հաշվետվության՝ բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված յուղեր (0.65տ/տարի/ և դիզելային յուղերի մնացորդներ (0.47/տարի), հավաքվելու են առանձին մետաղական

ЭКСПЕРТНЫЙ
ЭКСПЕРТНЫЙ
COMMISSION
OF EXPERTS

տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուղերի և քսայուղերի վերամշակման կետերին,

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում առաջացած բանեցված անվադողերը հավաքվելու են նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին պայմանագրային հիմունքներով վաճառելու համար,

- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), կուտակվելու է տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ШН-БЦБ-1.4 ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն՝ գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված հաշվարկի՝ խմելու ջրի ծախսը կազմում է 96.98մ³/տարի, միջին օրական 0.373մ³, իսկ տեխնիկականը 210.0մ³/տարի: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների՝ 2400մ², լցակույտերի 1400մ² մակերոսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար, որոնց համար ջրի տեսակարար ծախսը կազմում է 0.5լ/մ²:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, օդ, ջուր, կենսաբազմազանություն/ վրա կապված են լինելու արդյունահանման աշխատանքների, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային փոփոխության և ամբողջականության պահպանման, թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործումից, տրանսպորտի օգտագործումից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, բենզինային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ: Համաձայն գնահատման հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների, սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Հանքավայրի շահագործման հետևանքով, մթնոլորտային օդի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված տնտեսական տարեկան առավելագույն վնասը կազմում է 117470 ՀՀ դրամ, իսկ հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած վնասը՝ 4753550 ՀՀ դրամ/տարի:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ),
- բացահանքի մշակված տարածության հարթեցում,
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար:
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,
- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվարկվել է հանքավայրի փակման համար ֆինանսական երաշխիքը՝ 300 հազար ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Շինարարության և շահագործման ընթացքում Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Հաշվետվությունում ներկայացված միջոցառումների, մշտադիտարկումների իրականացման արդյունքում, վերահսկելի և կառավարելի կլինեն օդային ավազանն աղտոտող վնասակար նյութերի քանակները և աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու պահանջվող չափը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության բոլոր փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Ամասիա համայնքում և Գտաշեն բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը պետք է տրամադրվի պետական մարմիններին և համապատասխան պահանջի դեպքում՝ հանրությանը:
- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները՝ մասնավորապես բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
- Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ապահովել հաշվետվությամբ ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին: Պարբերաբար իրականացնել մոնիթորինգ, առաջնորդվելով 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն ՀՀ կառավարության որոշման պահանջներով:
- Բացառել տարածքից դուրս գործառույթների իրականացումը՝ մասնավորապես լցակույտերի, թափոնների տեղադրումը:
- Հանքավայրի արդյունահանման ժամանակ ջրօգտագործումն իրականացնել այնպես, որ չառաջանան ավելորդ մակերևութային ջրեր, ապահովել հորատիպ զուգարանում հավաքված կեղտաջրերի ժամանակին հեռացումը՝ հոսքաջրերի ներթափանցումը հողային, ջրային ռեսուրսներ բացառելու նպատակով:
- Գործունեության ընթացքում առաջացող բուսահողը պահպանել Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան բացառելով բուսահողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք

ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀենդՀայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Գյուլիբուլաղի տուֆերի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան